ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և ~~բնակվելու,~~ բնակվելու՝ այդ թվում Հայատանի Հանրապետության տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններում, հյուպատոսական հիմնարկներում, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում կամ դրանց ներկայացուցչություններում աշխատելու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրացիների և նրանց ընտանիքների անդամների վրա տարածվում է այնքանով, որքանով վերջիններիս հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները սահմանված չեն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

3. Սույն օրենքը չի տարածվում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրացուն ապաստան և համապատասխան կարգավիճակ տալու կամ այն մերժելու, կորցնելու հիմքերի հետ կապված հարաբերությունների վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (այսուհետ՝ անձնագիր)՝ միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը.

արտոնագիր կամ մուտքի վիզա (այսուհետ՝ մուտքի վիզա)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործելու Հայաստանի Հանրապետություն, տարանցիկ երթևեկելու Հայաստանի Հանրապետության տարածքով, գտնվելու Հայաստանի Հանրապետությունում և դուրս գալու Հայաստանի Հանրապետությունից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով և ժամկետներում.

ժամանակավոր կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու

Հայաստանի Հանրապետության ~~տարածքում որոշակի ժամկետով~~ տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում.

~~**մշտական կացության կարգավիճակ՝** Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում.~~

մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության Վարչապետի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաս¬տանի Հանրապետության տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստա¬թղթի վավերականության ժամկետներում.

~~**հատուկ կացության կարգավիճակ՝** Հայաստանի Հանրապետության վարչապետի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում.~~

~~**աշխատանքի թույլտվություն՝** միասնական էլեկտրոնային հարթակում միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնի կողմից մուտքագրվող էլեկտրոնային հաստատում, որը թույլ է տալիս օտարերկրացուն ձեռք բերել ժամանակավոր կացության կարգավիճակ և աշխատել Հայաստանի Հանրապետությունում.~~

Աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայստանի Հանրապետությոքւնում գտնվելու/բնակվելու թույլտվություն՝ միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից շահագործվող էլեկտրոնային հարթակներում մուտքագրվող էլեկտրոնային հաստատում, որը թույլ է տալիս օտարերկրացուն ձեռք բերել աշխատանքային մուտքի վիզա կամ ժամանակավոր կացության կարգավիճակ կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական գտնվելու ժամկետում աշխատել Հայաստանի Հանրապետությունում.

ծագման պետություն՝ պետություն, որի քաղաքացին է համարվում այն անձը կամ այն պետությունը, որում բնակվում է քաղաքացիություն չունեցող անձը կամ այն անձը, որի քաղաքացիությունը հնարավոր չէ հաստատել.

հրավեր կամ միջնորդագիր (այսուհետ՝ հրավեր)՝ փաստաթուղթ, որը հիմնավորում է օտարերկրացու մուտքը և գտնվելը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ դրանում նշված նպատակներով և ժամկետներով.

արտաքսում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում իրավասու պետական մարմնի կողմից օտարերկրացու հարկադիր հեռացումը Հայաստանի Հանրապետությունից.

կոլեկտիվ արտաքսում՝ առնվազն երկու օտարերկրացիներից բաղկացած խմբի արտաքսումը՝ առանց խմբի յուրաքանչյուր անդամի անձնական տվյալները և առանձնահատուկ վիճակը հաշվի առնող օբյեկտիվ և ողջամիտ քննարկման հիման վրա ընդունված որոշման.

փոխադրող՝ ցամաքային և օդային տրանսպորտով միջազգային ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպություն.

ուղեկցող՝ մշակութային, մարզական, երիտասարդական միջոցառումներին մասնակցելու կամ խմբակային զբոսաշրջության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող մինչև 18 տարեկան օտարերկրացիների խմբի ղեկավար.

ընդունող կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ, որը կազմակերպում է մինչև 18 տարեկան օտարերկրացիների մասնակցությամբ մշակութային, մարզական, երիտասարդական միջոցառումներ կամ զբոսաշրջային տուրեր.

~~**միասնական էլեկտրոնային հարթակ՝** սույն օրենքի 22.1-ին հոդվածով նախատեսված էլեկտրոնային հարթակ, որի կիրառմամբ տրամադրվում է աշխատանքի թույլտվություն, դրա միջոցով մուտքագրվում կամ վերբեռնվում են աշխատանքի թույլտվություն ստացող և աշխատանքի թույլտվությունից ազատված օտարերկրացի աշխատողների վերաբերյալ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով տեղեկություններ, ինչպես նաև իրականացվում է պետական մարմինների, գործատուների և օտարերկրացիների միջև հաղորդակցությունը:~~

էլեկտրոնային միասնական հարթակ՝ էլեկտրոնային հարթակ, որի կիրառմամբ, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով, միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից իրականացվում են օտարերկրացիներին ժամանակավոր կամ մշտական կարգավիճակ տալու, երկարաձգելու, ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու, կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը փոխանակելու, աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի ՀԱնրապետությունում գտնվելու/բնակվելու թույլտվություն տալու վարույթները, այդ վարույթների շրջանակում ապահովում է պետական մարմինների, գործատուների, ուսումնական հաստատությունների, քաղաքացիների և օտարերկրացիների միջև ծանուցումների, տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակումը.

օրինական բնակության իրավունք՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը, ինչպես նաև սույն օրենքով (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված տեղեկանքի) կամ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող այլ կարգավիճակ.

քվոտա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարվա կտրվածքով սահմանվող կացության կարգավիճակների սահմանաչափի նախատեսում՝ ըստ կացության կարգավիճակների տեսակի, քանակի և հիմքերի:

Հոդված 7. Առանց մուտքի վիզայի Հայաստանի Հանրապետություն ժամանելու իրավունք ունեցող օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելը

1. Այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է Հայաստանի Հանրապետություն ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են մնալ

առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված օտարերկրացիների անձնագրում հատուկ նշում է կատարվում նրանց՝ Հայաստանի Հանրապետություն ժամանման ամսաթվի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

~~3. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ժէ» կետով նախատեսված կատեգորիայի օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ավելի գտնվելու մտադրության դեպքում պարտավոր է մինչև նշված ժամկետի ավարտը դիմել միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմին՝ իր և իր ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք ստանալու համար:~~

Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված կատեգորիայի օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային /ծառայությունների մատուցման/ պայմանագիր կնքելուց անմիջապես հետո պարտավոր է դիմել միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմին՝ իր և իր ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք ստանալու համար:

Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված կատեգորիայի օտարերկրացուն և նրա ընտանիքի անդամին բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք տալու դիմումները քննարկելու, ներառյալ կարգավիճակը հավաստող փաստաթուղթը տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով, որը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով հնարավոր է վճարել նաև առցանց:

~~4. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» կետով սահմանված օտարերկրացուն իրավասու մարմնի ներկայացմամբ միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը տրամադրում է բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք, եթե այդ անձը չունի Հայաստանի Հանրապետությունում կացության այլ կարգավիճակ:~~

Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված օտարերկրացուն իրավասու մարմնի ներկայացմամբ միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը տրամադրում է տեղեկանք և հանրային ծառայությունների համարանիշ, եթե այդ անձը չունի Հայաստանի Հանրապետությունում կացության այլ կարգավիճակ:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված տեղեկանքի ձևը, այն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, տրամադրման կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 8. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տրամադրելը (ժամկետի երկարաձգման) մերժելը, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելը կամ մուտք գործելն արգելելը

1. Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե՝

ա) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի.

բ) նա սույն օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի.

գ) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝

- վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,

- իրականացնել ահաբեկչական գործունեություն,

- սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ

- իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում.

դ) նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ նման հիվանդությունը բուժելու նպատակով: Այդ վարակիչ հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

ե) նա մուտքի թույլտվություն հայցելիս ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա մուտքը կամ գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, կամ

զ) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին այլ լուրջ և հիմնավոր սպառնալիքներ.

է) նա ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրվանից անցել է մեկ տարի:

2. Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում, կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե նա օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման Հայաստանի Հանրապետությունում հանցագործություն կատարելու համար:

Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառում լիազորված պետական մարմինը օտարերկրացու ազատազրկման դատապարտման մասին Հայաստանի Հանրապետության դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական մարմնին՝ սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով արտաքսման վերաբերյալ գործ հարուցելու համար:

Օրինական ուժի մեջ մտած դատավճռով օտարերկրացու ազատազրկման դատապարտվելու պատճառով արտաքսման մասին որոշում կայացվելու դեպքում օտարերկրացու մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե օրինական ուժի մեջ մտած արտաքսման մասին որոշումն ի կատար ածելուց հետո ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու դեպքում չի անցել երեք տարի, ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ հինգ տարի, իսկ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ ութ տարի:

Սույն մասի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող մերձավոր ազգականներ (ամուսին, զավակ, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարելու համար հետախուզվող անձանց վրա:

~~3. Օտարերկրացուն տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա աշխատանքի է անցել Հայաստանի Հանրապետությունում առանց աշխատանքի թույլտվության, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:~~

4. Բացառության կարգով սույն հոդվածի առաջին մասի «ա», «բ» և «է» կետերում նշված հիմքերի առկայության դեպքում օտարերկրացիների մուտքը կարող է թույլատրվել խիստ հիմնավորված դեպքերում:

5. Սույն հոդվածով մուտքի վիզայի տրամադրման (ժամկետի երկարաձգման) մերժման, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելու կամ մուտքի մերժման մասին օտարերկրացու անձնագրում կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի նշում:

6. Սույն հոդվածի 1-3-րդ մասերում նշված անձանց մասին տվյալները մտցվում են Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկ:

Տվյալների բանկը վարում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, որն էլ անհրաժեշտ տեղեկություններ է մուտքագրում տվյալների բանկ: Տվյալների բանկում տեղեկություններ մուտքագրելու նպատակով ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին տեղեկություններ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ոստիկանությունը, միգրացիայի և

քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

Տվյալների բանկից օգտվելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ոստիկանությունը, միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության դատարանները, Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդում իրականացնող մարմինները:

Տվյալների բանկում տեղեկություններ մտցնելու և դրանից օգտվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Սույն հոդվածով նախատեսված գործառույթները պետական սահմանի անցման կետերում իրականացնում են ազգային անվտանգության մարմինները:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի տեսակները

1. Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի տեսակներն են՝

ա) **այցելության մուտքի վիզա՝** հարազատներին (ընկերներին) այցելելու կամ տեսակցելու, ընտանիքի վերամիավորման ~~(սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի «գ» կամ «դ» կետերով նախատեսված դեպքերում),~~ զբոսաշրջության (հանգստի), բուժման, Հայաստանի Հանրապետության կրթական հաստատություններում ուսանելու, Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող մշակութային, մարզական, գիտական և այլ միջոցառումներին, խորհրդաժողովներին մասնակցելու, Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական աջակցության, մարդասիրական, բարեգործական, ֆինանսական օգնության կարճատև ծրագրերի իրականացման, գործարար բանակցություններին մասնակցելու, ~~աշխատանքային գործունեություն կատարելու,~~ տնտեսական գործունեություն ծավալելու (առևտրային կազմակերպություն հիմնադրելու, օտարերկրյա պետության առևտրային կազմակերպության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն հիմնադրելու, Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու, ապրանքների և ծառայությունների ներմուծում և արտահանում իրականացնելու) նպատակով այցելության համար, ինչպես նաև միջազգային օդային կամ ցամաքային ուղևորաբեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների անձնակազմերի անդամների համար՝ մեկանգամյա մուտքի կամ մինչև մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար.

բ) **պաշտոնական մուտքի վիզա՝** պաշտոնական (ծառայողական) անձնագիր կրող անձանց համար՝

- Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների, Հայաստանի Հանրապետությունում նստավայր ունեցող միջազգային կազմակերպություններում կամ նրանց ներկայացուցչությունների դիվանագիտական կարգավիճակ չունեցող աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար՝ մինչև 3 տարի ժամկետով բազմակի մուտքի համար,

- Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների հրավերով ծառայողական նպատակներով Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց՝ մեկ մուտքի կամ մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար,

- սովորական անձնագրերով պաշտոնական պատվիրակությունների անդամների համար՝ մեկ մուտքի կամ մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար.

գ) **դիվանագիտական մուտքի վիզա՝** դիվանագիտական անձնագիր կրող կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող անձանց համար՝

- Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների, Հայաստանի Հանրապետությունում նստավայր ունեցող միջազգային կազմակերպություններում կամ նրանց ներկայացուցչությունների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար՝ մինչև 3 տարի ժամկետով բազմակի մուտքի համար,

- պաշտոնական, պետական, աշխատանքային այցով կամ ծառայողական նպատակներով Հայաստանի Հանրապետություն ժամանող պատվիրակության անդամներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց համար՝ մեկ մուտքի կամ մինչև 1 տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար,

- ոչ ծառայողական նպատակներով Հայաստանի Հանրապետություն ժամանողների համար՝ մինչև 120 օր վավերականության ժամկետով մեկ մուտքի համար.

դ) **տարանցիկ մուտքի վիզա՝** Հայաստանի Հանրապետության տարածքով օդային կամ ցամաքային տրանսպորտով երթևեկողների համար մեկ մուտքի կամ մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար՝ մինչև 3 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը մինչև 4 օր երկարաձգելու հնարավորությամբ÷.

ե) աշխատանքային մուտքի վիզա՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում կարճաժամկետ աշխատանքային գործունեություն իրականացնելու կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար Հայաստանի Հանրապետության տարածքից դիմում ներկայացնելու կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը ստանալու համար՝ մինչև 120 օր գտնվելու իրավունքով մեկանգամյա կամ բազմակի մուտքի համար՝ առանց երկարաձգման հնարավորության: Աշխատանքային մուտքի վիզան տրվում է տվյալ օրացույցային տարվա ընթացքում միայն մեկ անգամ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մուտքի վիզաները կոդավորվում են ըստ այցելության տեսակի:

3. Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տալիս են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները կամ հյուպատոսական հիմնարկները, իսկ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում՝

ազգային անվտանգության մարմինները: Պետական սահմանի անցման կետ չհանդիսացող Հայաստանի Հանրապետության տարածքում մուտքի վիզա տալիս են միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, ինչպես նաև արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

4. Արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը տրամադրում և երկարաձգում է սույն հոդվածի առաջին մասի «բ» և «գ» կետերում նշված մուտքի վիզաները, ինչպես նաև տրամադրում է էլեկտրոնային մուտքի վիզաներ, որոնց տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը տալիս և երկարաձգում է սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «դ» կետերում նշված մուտքի վիզաների տեսակները, ինչպես նաև տրամադրում է սույն հոդվածի 1-ին մասի «ե» կետում նշված մուտքի վիզաները, որոնց տրամադրման, ինչպես նաև Հայստանի Հանրապետություն մուտքի վիզայի նպատակը փոխելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ազգային անվտանգության մարմինները տալիս են սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «դ» կետերում նշված մուտքի վիզաների տեսակները միայն պետական սահմանի անցման կետերում:

5. Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրվող մեկանգամյա մուտքի վիզայի վավերականության ժամկետը երկու ամսով գերազանցում է Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամկետը, իսկ Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետում կամ անհրաժեշտության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տրվող մեկ մուտքի վիզայի ժամկետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամկետին: Դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում տրվող մուտքի վիզայի վավերականության ժամկետը կարող է համապատասխանեցվել օտարերկրացու կողմից գրավոր հայտարարված Հայաստանի Հանրապետություն մուտքի ժամկետի հետ:

6. Օտարերկրացին կարող է դիմել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու խնդրանքով նախատեսվող այցից առավելագույնը 4 ամիս առաջ:

7. Վիզա տրամադրող մարմինները մուտքի վիզա ստացած անձանց տվյալները մտցնում են համապատասխան տվյալների բանկ, որը վարում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը: Մուտքի վիզա ստացած անձանց տվյալների բանկի վարման, տվյալների մուտքագրման և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Հրավերը

1. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավեր կարող են տալ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին.

բ) Հայաստանի Հանրապետությունում կացության կամ փախստականի կարգավիճակ ունեցող օտարերկրացին.

գ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք.

դ) Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները:

2. Հրավերը պարունակում է հրավիրվողի և հրավիրողի տվյալները, հրավերի նպատակը, հրավիրվողի՝ Հայաստանի Հանրապետությունում մնալու ժամկետները:

Հրավերի տիպային ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հրավերը վավերական է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից հաստատվելուց հետո, որի համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

4. Հրավերը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելիս սույն հոդվածի առաջին մասի «ա» կետում նշված քաղաքացիները ներկայացնում են անձնագիր, «բ» կետում նշված անձինք՝ անձնագիր և կացության ~~քարտ (Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր)~~ կամ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթուղթը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի «գ» կետում նշված իրավաբանական անձինք՝ Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի տված գրանցման վկայականի պատճենը:

Սույն մասում նշված անձինք ներկայացնում են նաև տեղեկատվություն հրավիրվողի կողմից իր կեցության ծախսերը, այդ թվում՝ նրա հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու ծախսերը հոգալու մասին, կամ պարտավորություն այդ ծախսերը իր կողմից հոգալու մասին՝ երկու դեպքում էլ ներկայացնելով պետական տուրքի վճարման անդորրագիր:

5. Իրավասու մարմնի կողմից հրավերի հաստատումը մերժվում է, եթե առկա են սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում նշված հիմքերը, կամ հրավիրողը նախկինում խախտել է սույն հոդվածի 4-րդ մասում նշված իր պարտավորությունները:

6. Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերները և մուտքի վիզան երկարաձգելու միջնորդագրերը առավելագույնը 15-օրյա ժամկետում հաստատում է՝

ա) սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում նշված դեպքերում՝ միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը.

բ) սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերում նշված դեպքերում՝ արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

գ) ***(կետն ուժը կորցրել է 27.05.21 ՀՕ-267-Ն)***

Հրավերների հաստատման և հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 14. Օտարերկրացիների կացության կարգավիճակները

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները.

ա) ժամանակավոր.

բ) մշտական.

~~գ) հատուկ:~~

2. Հայաստանի Հանրապետության ժամանակավոր~~,մշտական և հատուկ~~ և մշտական կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը~~, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը~~ և մշտական կացության քարտը, որոնց ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2.1. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը, կացության վկայականի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2.2. Օտարերկրացին Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է ունենալ օրինական բնակությունը հավաստող միայն մեկ կարգավիճակ:

~~3. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներին կացության կարգավիճակ տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով:~~

3. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու վարույթը իրականացվում է միայն էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով, որը վարում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը: Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներին կացության կարգավիճակ տալու դիմումները քննարկելու, ներառյալ կարգավիճակը հավաստող փաստաթուղթը տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով, որը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով հնարավոր է վճարել նաև առցանց:

Հոդված 15. Ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները

1. Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում ~~մեկ տարի և ավել~~ մինչև մեկ տարի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

~~ա) ուսումը, կամ~~

~~բ) սույն օրենքի համաձայն՝ աշխատանքի թույլտվությունը, իսկ սույն օրենքի 23 րդ հոդվածի 1 ին մասի «ե» «թ», «ժբ», «ժե», «ժզ», «ժթ», «ի» կետերով նախատեսված կատեգորիայի օտարերկրացիների համար՝ աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացությունը, կամ~~

ա) ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական ծրագրերում, մասնագիտական վերապատրաստման դասընթացներում, կրթական փոխանակման ծրագրերում ուսումնառությունը, ինչպես նաև գիտատեխնոլոգիական կամ նորարարական (ինովացիոն) գործունեություն իրականացնելը.

բ) սույն օրենքի համաձայն՝ աշխատանքային վիզայի, աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության գտնվելու/բնակվելու թույլտվության կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կամ 13-րդ կետերով սահմանված իրավունքի առկայությունը, կամ.

~~գ) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող, սույն օրենքի 23 րդ հոդվածի 1 ին մասի «ժէ» կետով կամ 7 րդ հոդվածի 3 րդ մասի հիմքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ~~

~~դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ~~

~~ե) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.~~

դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում կացության կամ փախստականի կարգավիճակ ունեցող օտարերկրացու ընտանիքի անդամ՝ ամուսին, ծնող, զավակ լինելը, կամ.

ե) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը.

զ) ազգությամբ հայ լինելը.

զ.1) օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրով կամավոր աշխատանք կատարելը.

է) օրենքով սահմանված այլ դեպքեր:

~~2. Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:~~

~~Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:~~

~~Ուսման նպատակով ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է սահմանվել ավելի կարճ ժամկետ:~~

2. Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի ~~«գ» և «դ» կետերով~~ «դ» կետով նախատեսված հիմքով ժամանակավոր կարգավիճակ ձեռք բերած օտարերկրացի ամուսինը Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու հետ ամուսնությունը լուծելու կամ անվավեր ճանաչելու դեպքում կարող է

դիմել ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումով, եթե նա ամուսնության մեջ է գտնվել և Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվել է առնվազն մեկ տարի:

~~**Հոդված 16. Մշտական կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները**~~

~~1. Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝~~

~~ա) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ~~

~~բ) ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:~~

~~2. Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Մշտական կացության քարտը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի մշտական կացության քարտի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:~~

Հոդված 16. Մշտական կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները

1. Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

ա) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ընտանիքի անդամի (ամուսին, ծնող, զավակ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելը օրենքով սահմանված կարգով վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետությունում ունեցել է ժամանակավոր կացության կարգավիճակ կամ.

բ) ազգությամբ հայ է կամ.

գ) Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելը օրենքով սահմանված կարգով վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետությունում ունեցել է ժամանակավոր կացության կարգավիճակ կամ.

դ) Հայաստանի Հանրապետությունում ներդրում է կատարել. կամ

ե) Հայաստանի Հանրապետությանը մատուցել է բացառիկ ծառայություններ:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով:

~~**Հոդված 17.**~~ ~~**Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումի ներկայացումը, քննարկումը և ժամանակավոր ու մշտական կացության կարգավիճակներ ունեցող օտարերկրացիների հաշվառումը**~~

-

~~1. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացվում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին:~~

~~2. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~3. Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշում կայացնում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ դիմումը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ.1» կետերի հիմքերով կացության կարգավիճակի տրամադրման դեպքերի:~~

~~4. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին հաշվառում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~5. Մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունից 6 ամսից ավել բացակայելու դեպքում այդ մասին գրավոր ծանուցում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին:~~

Հոդված 17. **Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումի ներկայացումը, քննարկումը և ժամանակավոր ու մշտական կացության կարգավիճակներ ունեցող օտարերկրացիների հաշվառումը, կարգավիճակ տալու մասին որոշումը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելը**

Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը, էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով ներկայացվում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին:

Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալը, մերժելը, կացության քարտ տրամադրելը, կացության կարգավիճակ տալու մասին որոշումը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելը՝ էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով իրականացնում է լիազոր պետական մարմինը՝ Հայասատանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված կարգով:

Էլեկտրոնային միասնական հարթակի կիրառմամբ՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումի քննարկման հայտերի լրացման և ներկայացման, օտարերկրացիներին ժամանակավոր կամ մշտական կարգավիճակ տալու, ծանուցման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, վարչական մարմինների միջև տեղեկատվությունը, փաստաթղթերը փոխանակելու կարգը և հարթակի տեխնիկական նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշում, բացառությամբ 16-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված հիմքի, կայացնում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ դիմումը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում՝ հիմք ընդունելով նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված տվյալ տարվա կացության կարգավիճակների սահմանաչափի վերաբերյալ քվոտային ցուցանիշները: Եթե ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու վարույթի ընթացքում լրացել է օտարերկրացու Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական գտնվելու կամ բնակվելու ժամկետը, ապա մինչև վարույթի ավարտը և լիազոր մարմնի կողմից որոշման կայացումը օտարերկրացու գտնվելը Հայաստանի Հանրապետության տարածքում համարվում է օրինական:

. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված հիմքով օտարերկրացուն մշտական կացության կարգավիճակ տրվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին հաշվառում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը, էլեկտրոնային միասնական հարթակի կիրառմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանած կարգով:

. Օտարերկրացին ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակի քարտը, բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքը միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնից ստանում է անձամբ՝ տրամադրելով կենսաչափական տվյալները՝ մատնահետքերը և ստորագրության էլեկտրոնային օրինակը, բացառությամբ 16 տարին չլրացած օտարերկրացիների, որոնց օրինական բնակության իրավունքը հավաստող փատաթուղթը ստանում է ծնողը կամ օրինական ներկայացուցիչը:

. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին, բացառությամբ 16-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերով նախատեսված հիմքերով կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացուց, Հայաստանի Հանրապետությունից 183 օր և ավել բացակայելու դեպքում այդ մասին էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով, 183 օրյա ժամկետը լրանալու պահից հաշվարկված՝ ոչ ուշ քան 10 օրյա ժամկետում, ծանուցում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին: Նշված գործողությունը չկատարելու դեպքում օտարերկրացու կացության կարգավիճակը համարվում է ուժը կորցրած:

. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու վարույթի ընթացքում կացության կարգավիճակ ստանալու դիմում ներկայացրած անձը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ծանուցվում է հայտնաբերված սխալները, վրիպակները շտկելու, ինչպես նաև ոլորտը կարգավորող օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Եթե ժամանակավոր կամ մշտական կացություն ստանալու դիմում ներկայացրած անձը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ծանուցումը ստանալու պահից՝ 5 օրյա ժամկետում չի կատարում ծանուցմամբ նշված գործողությունը, ապա միասնական էլեկտրոնային հարթակը ինքնաշխատ եղանակով կասեցնում է վարույթը:

. Եթե ժամանակավոր կամ մշտական կացություն ստանալու դիմում ներկայացրած անձը Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն՝ կասեցված վարույթը վերսկսելու հետ կապված գործողություններ չի կատարում մեկ ամսվա ընթացքում, ապա միասնական էլեկտրոնային հարթակը ինքնաշխատ եղանակով կարճում է վարույթը:

~~Հոդված 18. Հատուկ կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները~~

~~1. Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին:~~

~~Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:~~

~~2. Հատուկ կացության կարգավիճակ տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:~~

~~3. Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացվում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:~~

~~4. Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումի քննարկման կարգը, ժամկետները, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~5. Հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու որոշում կայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:~~

~~6. Հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձանց հաշվառումն իրականացնում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~Հոդված 19. Կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը~~

~~Օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝~~

~~ա) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի.~~

~~բ) նա դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի մարվել կամ վերացվել.~~

~~գ) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝~~

~~- վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,~~

~~- իրականացնել ահաբեկչական գործունեություն,~~

~~- սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ~~

~~- իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում.~~

~~դ) նա տառապում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով.~~

~~ե) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին լուրջ և հիմնավորված սպառնալիքներ.~~

~~զ) կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.~~

~~է) նա սույն օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակվող ամուսին, ծնող կամ զավակ ունեցող անձանց վրա:~~

Հոդված 19. Կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը

1. Օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել եթե՝

1) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման որոշման կատարման պահից կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի.

2) նա դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի մարվել կամ վերացվել.

3) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝

ա) վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,

բ) իրականացնել ահաբեկչական գործունեություն,

գ) սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր,

դ) իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում,

4) նա տառապում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով.

5) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին ուղղված հիմնավորված սպառնալիքներ.

6) կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.

7) նա սույն օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի կամ մինչև մեկ տարին լրանալը կատարել է վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը.

8) չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը կամ սահմանված ժամկետում չի ներկայացրել (համալրել) ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջվող փաստաթղթերը.

9) վերացել է կացության կարգավիճակ տալու հիմքը.

10) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրացու հետ չի կնքվել աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ.1» կետի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալուց հետո կարգավիճակը ստանալու համար հիմք հանդիսացող կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը լուծվել է և 15 աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրացու հետ նոր կամավոր աշխատանքի մասին պայմանագիր չի կնքվել.

11) սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ» և «դ» կետերում նշված մուտքի վիզաներից որևէ մեկով ժամանել է Հայաստանի Հանրապետություն և առանց մուտքի վիզայի տեսակը փոխելու դիմել է սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար .

12) սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասիվ սահմանված կարգով մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն և առանց աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու/բնակվելու թույլտվություն ստանալու դիմել է սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետերի հիմքերով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար.

13) առկա է դատարանի՝ օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսելու կամ վտարելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշում.

14) լրացել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված քվոտան:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «2-րդ» կետով նախատեսված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակվող ամուսին, ծնող կամ զավակ ունեցող անձանց վրա:

Հոդված 20. ~~**Կացության կարգավիճակ ստանալու դիմումի մերժման բողոքարկումը**~~

Կացության կարգավիճակ տալու վերաբերյալ դիմումի մերժման բողոքարկումը

1. Կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

2. Եթե մինչև դատարանի կողմից գործի քննությունը կամ դատարանի կողմից կայացված որոշման ուժի մեջ մտնելը սպառվում է օտարերկրացու մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը, ապա միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը նրան տալիս է Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր մնալու թույլտվություն՝ մինչև դատարանի

որոշման օրինական ուժի մեջ մտնելը: Ժամանակավոր մնալու թույլտվություն տալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Եթե կացության կարգավիճակ ստանալը կամ երկարաձգելը մերժելու մասին որոշումը դատարանը թողնում է ուժի մեջ, ապա օտարերկրացին պարտավոր է դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, կամավոր հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածքից:

~~4. Կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին մեկ տարի հետո կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար, ինչի մասին նշում է կատարվում մերժման մասին որոշման մեջ:~~

~~Ուսման նպատակով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է սահմանվել դիմելու ավելի կարճ ժամկետ:~~

. Կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին մեկ տարի հետո կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար, ինչի մասին նշում է կատարվում մերժման մասին որոշման մեջ: Սույն մասի դրույթները չեն տարածվում 19-րդ հոդվածի 1-ին մասի «7-րդ», «8-րդ», «9-րդ», «10-րդ», «11-րդ», «12-րդ» , որոշում կայացնելու դեպքում օտարերկրացին կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար, եթե վերացել են մերժման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

~~Հոդված 21.~~ ~~Կացության կարգավիճակ տալու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու, կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու հիմքերը, կացության կարգավիճակից զրկելու հետևանքները և կացության կարգավիճակից զրկելու բողոքարկումը~~

-

~~1. Օտարերկրացուն տրված կացության կարգավիճակն անվավեր է ճանաչվում, և օտարերկրացին զրկվում է կացության կարգավիճակից, եթե՝~~

~~ա) պարզվել է, որ կացության կարգավիճակ ստանալիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.~~

~~բ) լուծվել կամ անվավեր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու հետ ամուսնությունը, որը հիմք է հանդիսացել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու համար, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքի.~~

~~գ) մշտական կացության կարգավիճակ ունենալու դեպքում առանց միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին իր մեկնելու մտադրության մասին ծանուցելու 6 ամսից ավելի բացակայել է Հայաստանի Հանրապետությունից կամ մշտապես մեկնել է Հայաստանի Հանրապետությունից.~~

~~դ) Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը սպառնում է Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին.~~

~~ե) եթե մինչև ժամանակավոր կացության կարգավիճակի ժամկետի ավարտը օտարերկրացու հետ լուծվել է աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիրը, և նա չի կնքել նոր պայմանագիր.~~

~~զ) մինչև ժամանակավոր կացության կարգավիճակի ժամկետի ավարտը օտարերկրացու հետ լուծվել է օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը, և նոր կամավոր աշխատանքի մասին պայմանագիր չի կնքվել:~~

~~Սույն մասով նախատեսված հիմքերով մերժվում է օտարերկրացու կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը:~~

~~2. Կացության կարգավիճակն անվավեր ճանաչելու, ինչպես նաև կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշման մեջ նշվում են նաև Հայաստանի Հանրապետության տարածքից օտարերկրացու կամավոր հեռանալու ժամկետները մինչև Հայաստանի Հանրապետության տարածքից հեռանալը նրա բնակվելու վայրը, ինչպես նաև առանց թույլտվության այդ բնակության վայրը թողնելու արգելքը:~~

~~3. Կացության կարգավիճակից զրկված օտարերկրացին, ինչպես նաև այն օտարերկրացին, որի կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշում է կայացվել, պարտավոր է կացության կարգավիճակից զրկելու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշման մեջ նշված ժամկետում հեռանալ Հայաստանի Հանրապետությունից, եթե կացության կարգավիճակից զրկելու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, որոշումը չի բողոքարկել դատական կարգով:~~

~~4. Կացության կարգավիճակից զրկված, ինչպես նաև այն օտարերկրացու վերաբերյալ տվյալները, որի նկատմամբ կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու որոշում է կայացվել, մտցվում են սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տվյալների բանկ:~~

~~5. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «զ.1» կետերի հիմքերով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակն անվավեր է ճանաչվում միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնի որոշման հիման վրա:~~

Հոդված 21. Կացության կարգավիճակ կամ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք տալու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հիմքերը, կացության կարգավիճակը անվավեր ճանաչելու հետևանքները

1. Օտարերկրացուն տրված կացության կարգավիճակն կամ սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով բնակության օրինականությունը ուժը կորցրած է ճանաչվում լիազոր մարմնի կողմից, եթե՝

1) վերացել են օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու հիմքերը.

2) օտարերկրացին կացության կարգավիճակն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.

3) ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

4) ձեռք է բերել փախստականի կարգավիճակ.

5) մինչև ժամանակավոր կացության կարգավիճակի ժամկետի ավարտը օտարերկրացու հետ լուծվել է աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիրը, և աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով 15 աշխատանքային օրվա ընթացքում չի կնքվել նոր պայմանագիր.

6) մինչև ժամանակավոր կացության կարգավիճակի ժամկետի ավարտը օտարերկրացու հետ լուծվել է օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը, և 15 աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրացու հետ նոր կամավոր աշխատանքի մասին պայմանագիր չի կնքվել.

7) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Օտարերկրացուն տրված կացության կարգավիճակն անվավեր է ճանաչվում, և օտարերկրացին զրկվում է կացության կարգավիճակից, եթե՝

1) պարզվել է, որ կացության կարգավիճակ ստանալիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.

2) Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը սպառնում է Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին:

3. Կացության կարգավիճակն ուժը կորցրած ճանաչելու, անվավեր ճանաչելու, մասին որոշման եզրափակիչ մասում պետք է արտացոլված լինեն նաև կացության կարգավիճակից զրկված լինելու, Հայաստանի Հանրապետության տարածքից օտարերկրացու կամավոր հեռանալու ժամկետների, մինչև Հայաստանի Հանրապետության տարածքից հեռանալը նրա բնակվելու վայրի, առանց թույլտվության այդ բնակության վայրը թողնելու արգելքի մասին նշումները:

4. Կացության կարգավիճակն անվավեր ճանաչելու հետևանքով կացության կարգավիճակից զրկված օտարերկրացու վերաբերյալ տվյալները ներմուծվում են սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տվյալների բանկ:

~~ԳԼՈՒԽ 4~~

~~ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ~~

ԳԼՈՒԽ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ

Հոդված 22. Օտարերկրացիների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում

1. Օտարերկրացիներն իրավունք ունեն ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները: Երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, քաղաքացիությունից և աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

~~2. Հայաստանի Հանրապետության գործատուն իրավունք ունի օտարերկրացու հետ կնքելու աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակի քարտի, իսկ 23-րդ հոդվածի 1-ին մասի «ժէ» և «ի» կետերում նշված օտարերկրացիների հետ՝ հանրային ծառայությունների համարանիշի առկայության դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրացու համար չի պահանջվում ունենալ կացության կարգավիճակ կամ ստանալ հանրային ծառայությունների համարանիշ:~~

~~3. Սույն օրենքի 22.1-ին հոդվածի 1-ին մասում նշված հայտը լրացվելու դեպքում թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար դիմելու սահմանված ժամկետը պետք է լինի նվազագույնը 15 աշխատանքային օր, որը թույլ կտա աշխատանքի և զբաղվածության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի պահանջները և հնարավորության դեպքում գործատուին միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով առաջարկել համալրելու աշխատատեղը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան:~~

~~4. Սույն օրենքի 23-րդ հոդվածում նշված օտարերկրացիներին աշխատանքի ընդունելիս չի գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներով թափուր աշխատատեղը համալրելու պահանջը,~~

~~բացառությամբ եթե այդ աշխատանքի համար պահանջվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, և այդ անձանց աշխատանքի ընդունելիս կիրառելի չեն սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:~~

~~5. Օտարերկրացին սույն օրենքով նախատեսված փաստաթղթերը (ժամանակավոր կացության կարգավիճակի քարտը կամ հանրային ծառայությունների համարանիշը) միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնից ստանում է անձամբ:~~

Հոդված 22.1. Միասնական էլեկտրոնային հարթակը և այդ հարթակով օտարերկրացի աշխատողների կամ կամավորների ներգրավումը

1. Օտարերկրացի աշխատող ներգրավելու համար գործատուն կամ կամավոր ներգրավելու համար՝ «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված Կազմակերպությունը լրացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված հայտ միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնի կողմից վարվող միասնական էլեկտրոնային հարթակում:

~~2. Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայտերի նվազագույն պահանջները, միասնական էլեկտրոնային հարթակում հայտերի լրացման և ներկայացման կարգը, միասնական էլեկտրոնային հարթակով օտարերկրացի աշխատողների ներգրավման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~**Հոդված 23. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունները**~~

~~1. Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել՝~~

~~ա) Հայաստանի Հանրապետության մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները.~~

~~բ) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «գ», «դ», «զ» և «զ.1» կետերով նախատեսված հիմքերով Հայաստանի Հանրապետության ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.~~

~~գ) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.~~

~~դ) կինեմատոգրաֆիայի, թատրոնի, համերգային շրջագայությունների նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող կատարողները, արտիստները և այդ միջոցառումների համար պատասխանատու վարչական և տեխնիկական սպասարկման անձնակազմը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.~~

~~ե) կանոնադրությամբ կեսից ավելիին ձայնի իրավունք տվող օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող առևտրային կազմակերպությունների հիմնադիրները և գործադիր մարմնի ղեկավարները՝ տվյալ կազմակերպություններում աշխատելու նպատակով.~~

զ) օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների մասնաճյուղերում կամ ներկայացուցչություններում աշխատելու նպատակով.

է) օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից իր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն առաքվող կամ օտարերկրյա առևտրային կազմակերպություններից գնված մեքենաները, սարքավորումները, հաստոցները տեղադրելու, վերանորոգելու և դրանք շահագործելու համար աշխատողներին որակավորելու նպատակով ժամանող օտարերկրյա մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ը) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.

թ) Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններում դասավանդելու, գիտական աշխատանք կատարելու (գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու) նպատակով հրավիրված օտարերկրացի դասախոսները, ուսուցիչները, գիտամանկավարժական գործունեություն իրականացնող այլ անձինք, ինչպես նաև այդ ուսումնական հաստատությունների ղեկավար կազմում ընդգրկված վարչակառավարչական գործառույթներ իրականացնող օտարերկրացիները.

ժ) լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժա) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

ժբ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող բարձր որակավորում ունեցող օտարերկրացիները.

ժգ) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքներին մասնակցելու նպատակով ժամանած անձինք՝ այդ աշխատանքներում մասնակցելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժդ) համատեղ իրականացվող վարույթներով հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքներում ներգրավվելու նպատակով ժամանած մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժե) օտարերկրացի այն մարզիկները, որոնք ունեն պրոֆեսիոնալ կարգավիճակ և միաժամանակ կնքում են մարզական գործունեության մասին պայմանագիր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագիր գործատուի հետ.

ժզ) օրենքով սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ ունեցող անձինք և հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցիչը.

ժէ) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

ժը) օտարերկրացի դատապարտյալները կամ կալանավորված անձինք, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիները.

ժթ) Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացի ուսանողները կրթությունն ավարտելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները.

ի) ազգությամբ հայ այն օտարերկրացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է այդ անձանց քաղաքացիների կյանքին կամ առողջությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված օտարերկրացիների հետ գործատուները աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր են կնքում միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ընթացակարգով:

3. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացությունը, ըստ իրավասությունների շրջանակի, տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած համապատասխան պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Հոդված 23 Հայաստանի Հանրապետությունում առանց աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու/բնակվելու թույլտվություն ստանալու աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելու իրավունք ունեցողները

1. Հայաստանի Հանրապետությունում առանց **աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու/բնակվելու թույլտվություն ստանալու** աշխատանքային /ծառայությունների մատուցման/ պայմանագիր կնքելու իրավասություն ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության մշտական կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

2) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ», «ե» կամ «զ» կետերով նախատեսված հիմքերով Հայաստանի Հանրապետության ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.

4) կինեմատոգրաֆիայի, թատրոնի, համերգային շրջագայությունների նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող կատարողները, արտիստները և այդ միջոցառումների համար պատասխանատու վարչական և տեխնիկական սպասարկման անձնակազմը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

5) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

6) լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

7) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած օտարերկրացիները՝ համապատասխան կարգավիճակի ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

8) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքներին մասնակցելու նպատակով ժամանած անձինք՝ այդ աշխատանքներում մասնակցելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

9) համատեղ իրականացվող վարույթներով հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքներում ներգրավվելու նպատակով ժամանած մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

10) օրենքով սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ ունեցող անձինք և հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցիչը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու կամ կացության կարգավիճակը չգերազանցող ժամկետում.

11) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի իրավունք ունեցող օտարերկրացիները՝ հանրային ծառայության համարանիշի առկայության դեպքում.

12) օտարերկրացի դատապարտյալները կամ կալանավորված անձինք, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիները՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկանքի և հանրային ծառայության համարանիշի առկայության դեպքում.

13) համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում աշխատանք կատարող ուսանողները.

14) ազգությամբ հայ այն օտարերկրացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է այդ անձանց քաղաքացիների կյանքին կամ առողջությանը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվելու ժամկետում: Անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակի վերաբերյալ դիրքորոշումը տրամադրելու է Հայաստանի

Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազոր պետական կառավարման մարմինը՝ միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի գրավոր հարցման հիման վրա:.

~~Հոդված 24.~~ ~~Աշխատանքային գործունեության կամ կամավոր աշխատանք կատարելու հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ տալը և ժամանակավոր կացության քարտի գործողության ժամկետը երկարաձգելը~~

-

~~1. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ.1» կետերի հիմքերով կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշում կայացնում է միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետում:~~

~~2. Օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիրը լուծվելու դեպքում օտարերկրացին կարող է Հայաստանի Հանրապետությունում այլ գործատուի հետ կնքել աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~3. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ.1» կետերի հիմքերով տրամադրված ժամանակավոր կացության քարտի գործողության ժամկետը երկարաձգում է միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~4. Աշխատանքի թույլտվության մեջ նշվում են այն աշխատանքը, որը պետք է կատարի օտարերկրացին, և այն գործատուն, որի մոտ նա անցնում է աշխատանքի: Աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակ տրվում, կամ դրա ժամկետը երկարաձգվում է աշխատանքի թույլտվության մեջ նշված ժամկետով:~~

~~Հոդված 25.~~ ~~Աշխատանքի թույլտվություն տրամադրելը մերժելու հիմքերը~~

-

~~Աշխատանքի թույլտվություն տրամադրելը մերժվում է, եթե՝~~

~~ա) Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վիճակը վերջինիս վերլուծության հիման վրա թույլ չի տալիս այդ աշխատանքը, ներառյալ՝ այն դեպքերը, երբ աշխատատեղը հնարավոր է համալրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներով.~~

~~բ) տվյալ աշխատանքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության օրենքներով պահանջվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.~~

~~գ) պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը կեղծված են.~~

~~դ) գործատուն, որի մոտ պետք է աշխատի տվյալ օտարերկրացին, նախկինում խախտել է օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու պահանջները.~~

~~ե) գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը սպառնացող պատճառներ.~~

~~**Հոդված 27. Աշխատանքային պայմանագրի (ծառայությունների մատուցման պայմանագրի) կնքումը**~~

~~1. Աշխատանքային պայմանագիրը (ծառայությունների մատուցման պայմանագիրը) կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ միայն սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրամադրված կացության կարգավիճակի ժամկետը չգերազանցող ժամկետով: Աշխատանքային պայմանագրում (ծառայությունների մատուցման պայմանագրում) պետք է ներառվեն նաև օտարերկրացի աշխատողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետություն փոխադրման, սոցիալական ապահովության և ապահովագրության, դիմավորման, կացարանով ապահովման և բնակության վայրում հաշվառման և վերադարձի հետ կապված հարցերը:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 27.05.21 ՀՕ-267-Ն)*~~

~~3. Օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, գործատուն դրա էլեկտրոնային տարբերակը, բացառությամբ առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունների, մուտքագրում է միասնական էլեկտրոնային հարթակ՝ հաշվառման համար: Աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրի և դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ վիճակագրական ամփոփ տեղեկությունները միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը պարբերաբար տեղադրում է իր պաշտոնական կայքում:~~

Հոդված 27. Օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրի կնքումը

1. Օտարերկրացու հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրված կացության կարգավիճակի, աշխատանքային վիզայի կամ աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու/բնակվելու թույլտվության ժամկետը չգերազանցող ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի:

Եթե մինչև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ)» և «զ.1)» կետերի հիմքով տրված ժամանակավոր կացության կարգավիճակի ժամկետի ավարտը լուծվել է օտարերկրացու հետ կնքված աշխատանքային կամ կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը, ապա օտարերկրացին կարող է 15 աշխատանքային օրվա ընթացքում կնքել նոր պայմանագիր:

Աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրում պետք է ներառվեն նաև օտարերկրացի աշխատողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետություն փոխադրման, սոցիալական ապահովության և ապահովագրության, դիմավորման, կացարանով ապահովման և բնակության վայրում հաշվառման և վերադարձի հետ կապված հարցերը:

2. Օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելը մերժվում է, եթե՝

ա) տվյալ աշխատանքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

բ) ներկայացված տեղեկատվությունը կամ փաստաթղթերը սխալ են կամ կեղծված են.

գ) գործատուն, որի մոտ պետք է աշխատի տվյալ օտարերկրացին, նախկինում խախտել է օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու պահանջները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նշված հիմքերով մերժվում է նաև աշխատանքային մուտքի վիզա տալու կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ)» կետի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ տալու կամ երկարաձգելու դիմումը:

 Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում նշված օտարերկրացիների հետ գործատուները աշխատանքային Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

~~Հոդված 28.~~ ~~Աշխատանքային գործունեության հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակն ուժը կորցրած ճանաչելը~~

~~1. Միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինն ուժը կորցրած է ճանաչում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակը, եթե՝~~

~~ա) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ.1» կետերի հիմքերով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրացու հետ չի կնքվել աշխատանքային (ծառայությունների մատուցման) կամ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր.~~

~~բ) օտարերկրացու ներկայացրած դիմումի հիման վրա.~~

~~գ) օտարերկրացին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման կամ սույն օրենքով սահմանված կարգով արտաքսվել է Հայաստանի Հանրապետությունից:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակն ուժը կորցրած ճանաչելու դեպքում միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ծանուցում է օտարերկրացուն և վերջինիս գործատուին որոշման կայացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:~~

Հոդված 29. Անօրինական միգրացիայի դեմ պայքարը

1. Եթե գործատուն Հայաստանի Հանրապետություն օրինական մուտք գործած օտարերկրացի աշխատողին չի ապահովում այն աշխատանքով, որի համար օտարերկրացուն սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրամադրվել է ժամանակավոր կացության կարգավիճակ, կամ աշխատանքային մուտքի վիզա ապա գործատուն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով հոգում է նրա, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների, որոնց թույլատրվել է ուղեկցել կամ միանալ նրան, ապրուստի, անձնական ունեցվածքի փոխադրման ծախսերը, ինչպես նաև վերադարձի ծախսերն իրենց ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել են, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրացի աշխատողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված հիմքերով:

~~2. Միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինն անվճար խորհրդատվություն է տրամադրում գործատուներին և օտարերկրացիներին միասնական էլեկտրոնային հարթակը կիրառելու վերաբերյալ:~~

~~Հոդված 29.1.~~ ~~Աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողությունը և վերահսկողությունը~~

-

~~1. Սույն օրենքով սահմանված աշխատանքի թույլտվության և դրա հիման վրա ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները, ըստ իրավասությունների շրջանակի, որոշվում են սույն օրենքով:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հսկողության և վերահսկողության արդյունքում հայտնաբերված՝ գործատուների կողմից առանց աշխատանքի թույլտվության օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած այնպիսի կասկածի դեպքում, որ օտարերկրացին հնարավոր է ենթարկված լինի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, այդ մասին տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության և միգրացիայի բնագավառներում կառավարության լիազորած պետական մարմիններ:~~

Հոդված 29.3. Ուսման հիմքով ժամանակավոր կացություն տալը

1. Օտարերկրացիները կարող են Հայաստանի Հանրապետությունում ստանալ ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության կամ գիտատեխնոլոգիական կամ նորարարական (ինովացիոն) գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով, եթե առկա է Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական, արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատության, գիտական կազմակերպության կամ համապատասխան իրավասություն ունեցող և ծառայություն

մատուցող կազմակերպությունների և օտարերկրացու միջև կնքված տվյալ հաստատությունում կամ կազմակերպությունում օտարերկրացու ուսումնառության կամ գիտատեխնոլոգիական կամ նորարարական (ինովացիոն) գործունեության մասին պայմանագիր:

2. Հանրակրթական, արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունները և գիտական կազմակերպությունները էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով ներկայացնում են դիմումը, ուսումնառության կամ գիտատեխնոլոգիական կամ նորարարական (ինովացիոն) գործունեության մասին պայմանագիրը և այլ փաստաթղթեր, եթե դրանք սահմանված են սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Ոչ ֆորմալ ուսման հիմքով համապատասխան ուսումնական հաստատությունը կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպությունը և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ներկայացնում է էլեկտրոնային հարթակի միջոցով:

4. Ոչ ֆորմալ ուսման հիմքով կացության կարգավիճակի տրամադրման դիմում կարող են ներկայացնել կրթական գործունեություն իրականացնող հաստատությունները և (կամ) կազմակերպությունները: Եթե ոչ ֆորմալ ուսուցման ծրագիր իրականացվում է կազմակերպության կողմից, որի հիմնական գործունեության ոլորտը կրթական ծրագրեր իրականացնելը չէ, ապա այդ կազմակերպությունը էլեկտրոնային հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պետք է ներկայացնի ոչ ֆորմալ ուսուցման հիմքով օտարերկրացուն կացության կարգավիճակի տրամադրման դիմում ներկայացնելու թույլտվություն ստանալու դիմում: Դիմումի մասին դրական կամ բացասական եզրակացություն է տալիս կրթության ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինը:

5. Ուսման հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակ է տրվում հիմք ընդունելով ուսումը կազմակերպող հաստատության հետ կնքված պայմանագրում նշված ժամկետը, բայց ոչ ավել, քան ժամանակավոր կացության կարգավիճակի համար օրենքով նախատեսված ժամկետը:

6. Ուսման հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակը ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) ուսումնական հաստատությունը լուծել է օտարերկրացու հետ կնքված ուսման մասին պայմանագիրը.

2) օտարերկրացին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման կամ սույն օրենքով սահմանված կարգով արտաքսվել է Հայաստանի Հանրապետությունից.

3) օտարերկրացուն կարգավիճակի տրամադրման դիմումը ներկայացրած իրավաբանական անձը լուծարվել է:

7. Օտարերկրացուն կրթության կամ ուսումնառության հիմքով կացության կարգավիճակի տրամադրման դիմում ներկայացրած իրավաբանական անձը սույն հոդվածի 6-րդ մասի «1)» կետով նախատեսված դեպքում պարտավոր

է էլեկտրոնային հարթակի միջոցով միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին տեղեկացնել օտարերկրացու հետ կնքված կրթության (ուսումնառության) մասին պայմանագիրը լուծելու կամ կրթությունը (ուսումնառությունը) սահմանված կարգով ընդհատվելու մասին՝ լուծելու կամ ընդհատելու օրվանից 10 օրյա ժամկետում:

Հոդված 29.4. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալը

1. Օտարերկրացիները կարող են Հայաստանի Հանրապետությունում ստանալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

2. Ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության կարգավիճակ ստանալու դիմումը ներկայացնում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը՝ էլեկտրոնային հարթակի միջոցով կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում օտարերկրացին անձամբ՝ գրանցվելով էլեկտրոնային հարթակում:

3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը կարող է հիմք լինել կացության կարգավիճակ ստանալու համար, եթե օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է առևտրային կազմակերպության մասնակից կամ բաժնետեր կամ արժեթղթերի սեփականատեր է և առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրել է առնվազն երկու միլիոն դրամ կամ ձեռք է բերել երկու միլիոն դրամ արժեքով բաժնետոմսեր կամ արժեթղթեր, կամ հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ունի անհատ ձեռնարկատիրոջ տարբեր արժույթներով հաշիվներին դրամային արտահայտմամբ առնվազն մեկ միլիոն դրամի չափով գումար կամ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող վաթսուն օրվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ունի մեկ միլիոն դրամի կամ դրան համարժեք արտարժույթի դրամաշրջանառություն:

4. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացուն նույն հիմքով նոր կացության կարգավիճակ է տրվում, եթե առկա է դիմում և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեության շարունակականությունը հաստատող էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված տեղեկատվություն, իսկ այդպիսի տեղեկատվության բացակայության դեպքում, օտարերկրացու կողմից ներկայացված փաստաթղթեր:

5. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով կացության կարգավիճակը ճանաչվում է ուժը կորցրած, եթե առևտրային կազմակերպությունից դուրս է հանվել կանոնադրական կապիտալում ներդրած կապիտալը կամ այն պակաս է մեկ միլիոն դրամից կամ բաժնետոմսերի կամ արժեթղթերի արժեքը պակաս է մեկ միլիոն դրամից կամ կացության կարգավիճակը ստանալուց հետո 180 օրյա ժամկետում պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանում ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հաշվարկված հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով կացության կարգավիճակն ուժը կորցրած չի ճանաչվում, եթե օտարերկրացին.

ա) առևտրային կազմակերպությունից կանոնադրական կապիտալը դուրս հանելու պահի դրությամբ ունի դրան համարժեք կատարված ներդրում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մեկ այլ առևտրային կազմակերպությունում. կամ

բ) առևտրային կազմակերպությունից դուրս է հանել կանոնադրական կապիտալում ներդրված կապիտալը և հաջորդող մեկ ամսվա ընթացքում այն ներդրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մեկ այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում:

Հոդված 29.5. Ընտանեկան հանգամանքների կամ ազգությամբ հայ լինելու հիմքով կացության կարգավիճակ տալը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում գործող կացության կամ փախստականի կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելու հիմքով կացության կարգավիճակ տալու դիմումը ներկայացնում է Հայատանի Հանրապետության քաղաքացին կամ կացության կամ փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքի անդամը՝ էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով:

2. Ազգությամբ հայ լինելու հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացնում է անձամբ օտարերկրացին: Նախքան դիմումի ներկայացումը օտարերկրացին գրանցվում է միասնական էլեկտրոնային հարթակում, ներկայացնում է կացության կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և հարթակի միջոցով հերթագրվում է դիմումն անձամբ ներկայացնելու համար, եթե լիազորված մարմինը նախնական ուսումնասիրությամբ հաստատվել է, որ ներկայացված փաստաթղթերն ու տեղեկություններն ամբողջական են և համապատասխանում են սահմանված պահանջներին: Փաստաթղթերն ու տեղեկություններն ամբողջական չլինելու կամ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում անձը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ծանուցվում է դրանք ներկայացնելու կամ համալրելու անհրաժեշտության մասին:

3. Մինչև 16 տարեկան երեխաները կացության կարգավիճակ կարող են ստանալ ծնողներից մեկի Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքի հիման վրա՝ կացության կարգավիճակ տալու մասին դիմումում ծնողի կողմից նշված ժամկետով, սակայն ոչ ավել, քան կացության տվյալ կարգավիճակի համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, կամ ծնողներից մեկի կացության կարգավիճակի հիման վրա՝ վերջինիս տրված կացության կարգավիճակի վավերականության ժամկետով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված ուսումնական հաստատություններում կամ փոխանակման ծրագրերով սովորող օտարերկրացի երեխաների:

Հոդված 29.6. Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու հիմքով մշտական կացության կարգավիճակ տալը

1. Օտարերկրացիները կարող են Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու հիմքով ստանալ մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու հիմքով կացության կարգավիճակ ստանալու դիմումը ներկայացնում է օտարերկրացին անձամբ՝ գրանցվելով էլեկտրոնային հարթակում:

3. Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու հիմքով մշտական կացության կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ վավերապայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետությունում ներդրում կատարելու հիմքով մշտական կացության կարգավիճակն ուժը կորցրած է ճանաչվում, եթե կացության կարգավիճակ ստանալուց հետո դադարել է բավարարել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված վավերապայմաններին:

Հոդված 29.7. Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած լինելու հիմքով մշտական կացության կարգավիճակ տալը

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած լինելու հիմքով մշտական կացության կարգավիճակ տալու դիմումը-հայտը միասնական էլեկտրոնային հարթակ է մուտքագրում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը՝ կցելով օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ստանալու մասին համաձայնությունը, օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցելու հիմքով մշտական կացության կարգավիճակ տալու պետական կառավարման մարմնի միջնորդությունը /առկայության դեպքում/ և ազգային անվտանգության ու ներքին գործերի բնագավառում լիազորված պետական մարմինների՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում տրված եզրակացությունները, որոնք ստանում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը՝ Ազգային անվտանգության ծառայություն և ներքին գործերի նախարարություն հարցումներ կատարելու միջոցով:

Հոդված 42. Օտարերկրացիների վերաբերյալ անձնական տվյալների պաշտպանությունը

~~Սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկում, 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մուտքի վիզա ստացած օտարերկրացիների տվյալների բանկում, 11-րդ հոդվածի 6-րդ մասի հրավերների հաշվառման ընթացքում, 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների հաշվառման ընթացքում, 18-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների հաշվառման ընթացքում, ինչպես նաև 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արտաքսված օտարերկրացիների հաշվառման ընթացքում օտարերկրացիների, ինչպես նաև այլ անձանց~~

~~անձնական տվյալները մշակելիս այդ անձնական տվյալներն օգտվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանությունից:~~

 Օտարերկրացիների, ինչպես նաև այլ անձանց անձնական տվյալները մշակելիս այդ անձնական տվյալներն օգտվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանությունից:

~~Հոդված 42.1. Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով օտարերկրացիների և գործատուների վերաբերյալ հավաքվող անձնական տվյալների պաշտպանությունը~~

~~1. Սույն օրենքի հիման վրա օտարերկրացուն աշխատանքի թույլտվություն, կացության կարգավիճակ, օրինական բնակությունը հաստատող տեղեկանք կամ աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու նպատակով միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրվում են օտարերկրացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (փաստաթղթի տեսաներածված պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը), լուսանկար, գործատուի կողմից ներկայացվող որակավորման կամ կրթական պահանջին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը, աշխատանքային ինքնակենսագրությունը, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը: Բնակության նպատակով օտարերկրացու հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող ընտանիքի անդամների դեպքում սույն կետում նշված տեղեկությունները մուտքագրվում են նաև օտարերկրացու ընտանիքի անդամների համար:~~

~~2. Միասնական էլեկտրոնային հարթակով գործատուն հայտ ներկայացնելիս մուտքագրում է գործատուի անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, գործատուի անունից դիմողի անունը, ազգանունը, նույնականացման քարտի տվյալները և պաշտոնը, համալրվող թափուր պաշտոնի նկարագիրը, աշխատավարձի չափը, աշխատանքի այլ պայմանները:~~

~~3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով օտարերկրացու վերաբերյալ կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելիս պետական լիազոր մարմնի մոտ առաջանում է առերևույթ ողջամիտ կասկած կամ ենթադրություն, որ ի հայտ են եկել կամ կարող են ի հայտ գալ օտարերկրացուն կացության կարգավիճակ տրամադրելը մերժելու, կարգավիճակն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու, արտաքսելու կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու անհնարինության հիմքեր:~~

~~4. Միասնական էլեկտրոնային հարթակով հավաքված անձնական տվյալները հավաքում և մշակում է միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը:~~

~~5. Միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը, ըստ իրավասությունների շրջանակի, ապահովում է օտարերկրացու և գործատուի վերաբերյալ տվյալների հասանելիություն այլ լիազոր մարմինների, այդ թվում՝ ազգային անվտանգության, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի բնագավառներում լիազորված պետական մարմիններին սույն օրենքով իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու նպատակով:~~

~~6. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում օտարերկրացու աշխատանքային գործունեությունը թույլատրելու գործընթացում իր անմիջական գործառույթներն իրականացնելուց հետո միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինն արգելափակում է պետական մարմինների հասանելիությունն օտարերկրացու կամ նրա գործատուի վերաբերյալ տեղեկություններին:~~

~~7. Օտարերկրացու վերաբերյալ տեղեկությունը, ներառյալ՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկությունները, փոխանակվում են պետական մարմինների միջև միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով:~~

~~8. Արգելվում է օտարերկրացու կամ նրա գործատուի վերաբերյալ տեղեկություններն օգտագործել, հավաքել, պահպանել այլ նպատակներով, քան անհրաժեշտ է լիազորված պետական մարմնին սույն օրենքով նախատեսված իր գործառույթներն իրականացնելու համար:~~

Հոդված 42.1. Էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով օտարերկրացիների և դիմումատուների վերաբերյալ հավաքվող անձնական տվյալների պաշտպանությունը

1. Էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված տեղեկություններում կամ փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների կամ անճշտությունների դեպքում էլեկտրոնային միասնական հարթակում վարչարարություն իրականացնող պետական մարմինները առկա փաստական հանգամանքերը օբյեկտիվ ուսումնասիրելու նպատակով կարող են պահանջել տվյալ վարույթին առնչվող լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

2. Էլեկտրոնային միասնական հարթակով հավաքված անձնական տվյալները հավաքում և մշակում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

3. Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, ըստ իրավասությունների շրջանակի, ապահովում է օտարերկրացու և կացության վարույթի մասնակիցների վերաբերյալ տվյալների հասանելիություն այլ լիազոր մարմինների, այդ թվում՝ ազգային անվտանգության, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի բնագավառներում պետական լիազոր մարմիններին սույն օրենքով իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու նպատակով:

4. Օտարերկրացու վերաբերյալ տեղեկությունը, ներառյալ՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկությունները, բացառությամբ պետական գաղտնիք համարվող տեղեկությունների, փոխանակվում են միայն պետական մարմինների միջև էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով:

5. Արգելվում է օտարերկրացու, իրավաբանական կամ ֆիզիկական անձի վերաբերյալ տեղեկություններն օգտագործել, հավաքել, պահպանել այլ նպատակներով, քան անհրաժեշտ է էլեկտրոնային միասնական հարթակում վարչարարություն իրականացնող պետական մարմիններին սույն օրենքով նախատեսված իր գործառույթներն իրականացնելու համար:

Հոդված 42.2. Էլեկտրոնային միասնական հարթակի կիրառմամբ իրականացվող հարցումները

Էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով օտարերկրացիներին կացության կարգավիճակի տրամադրման դիմումների վարույթները իրականացնելիս և սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացված տեղեկատվությունը ստուգելու նպատակով, հարցումներ են կատարվում.

Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստր՝ անձի նույնականացման, անուն, ազգանուն, հայրանուն դաշտերի լրացման, հաշվառման հասցեի, անձը հաստատող փաստաթղթերի, քաղաքացիության և սեռի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ իրավաբանական անձի գտնվելու վայրի, գործադիր մարմնի ղեկավարի, գրանցման հասցեի, կանոնադրական կապիտալի, մասնակիցների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարան՝ օտարերկրացիների՝ որպես աշխատող գրանցված լինելու հանգամանքը ստուգելու, հաշվարկված հարկերի մասին տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև իրավաբանական անձանց կողմից հաշվարկված հարկերի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակի տվյալների շտեմարան՝ օտարերկրացիների ամուսնության, Հայաստանի Հանրապետության քաղաքացու և օտարերկրացու ամուսնության, օտարերկրացիների մահվան և ծննունդների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Կադաստրի կոմիտեի տվյալների շտեմարան՝ օտարերկրացու կամ նրա ընտանիքի անդամի Հայաստանի Հանրապետությունում բնակարանով ապահովված լինելու կամ օտարերկրացու անշարժ գույք ունենալու հանգամանքի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Ոստիկանության շարժական գույքի տվյալների շտեմարան՝ օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետությունում շարժական գույք ունենալու և շարժական գույքը շահագործելու վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ՝ օտարերկրացու Հայաստանի

Հանրապետություն մուտքերի և ելքերի, ստացած վիզաների և նախկինում ունեցած կացության կարգավիճակների վերաբերյալ տվյալներ ստանալու, օտարերկրացու Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու օրինականությունը որոշելու, վերջինիս Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների բանկում հաշվառված լինելու հանգամանքը ստուգելու նպատակով անհրաժեշտ տվյալներ ստանալու համար.

Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի քարտադարան՝ օտարերկրացու դատվածության, այն մարված կամ վերացած լինելու, վերջինիս նկատմամբ հետախուզման վերաբերյալ տեղեկություններ ստանալու, օտարերկրացուն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով.

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա՝ օտարերկրացիներին պատկանող բաժնետոմսերի քանակի և արժեքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով.

Հայաստանի Հանրապետության գանձապետարան սույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու կամ պետական տուրքը վճարված լինելու մասին տեղեկատվություն ստանալու նպատակով.

կրթության կառավարման տեղեկատվական կամ բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգեր՝ ըստ կրթական մակարդակների, կրթական աստիճանների կամ կրթական ծրագրերի օտարերկրացիների՝ որպես սովորող գրանցված լինելու հանգամանքը ստուգելու և այլ անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով.

աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ՝ օտարերկացիների կողմից կնքված աշխատանքային պայմանագրերի, աշխատանքային պայմանագրում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին համաձայնագրերի, աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:»:

. Էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով տրամադրված կացության կարգավիճակի հիմքերի առկայությունը ստուգելու նպատակով հարցումներ են կատարվելու սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված համակարգերին: Հարցումներ կատարելու կարգը և հաճախականությունը սահմանվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: